

Ամիրապետներու յաջորդութեան ցանկը
կը սկսի եւ կ'աւարտի:

«Երկրորդ յիշխանութեանն Տանկայ
գկնի Մահմետայ նստաւ Արուսէֆը Աբի
Կահիմեան. եւ կալաւ ամս ինն: ... (վերջ.)
Հարուն Մադիայ որդին, գոր Մադիումն կո-
չեն, ամս ինն: Սա նեղութիւն անչափ հա-
սոյց աշխարհի. եւ վասն այն բազում գա-
ւառք Հայոց փախեան ի Հոռումս:

«Մահմատ, որդի Հարունայ. ամս Գ:

«Հարուն մինչ կենդանի էր, բաժանեաց
գիշխանութիւնն երկուց որդուց իւրոց՝
Մահմատայ եւ Մայմունայ. ի ստորիցնու-
թեանն ունէր Մահմատ գիշխանութիւնն ի
Բաղդատ եւ ի Խորասան. եւ Մայմունն ընդ
հակառակս նմա եղեալ պատերազմաւ՝ մե-
ռանի Մահմատ (25 սեպտ. 813) եւ Արդալ-
լահ, որ եւ Մայմունն կոչէր, իշխեաց ամե-
նայնի ամս (ի)՝: Իբրայիմ ամս՝ 2 ժ:

Հարուն ի Կ. Երբորդ նստաւ ի Մահմատայ
Ամիր Մուսին. եւ հայ քուականն էր ՄԿ ամ»
(811)³:

Արաբական ամսանունները պէտք է
իմանալ.

1. Սոփր, Սաֆար (safar) Բ. ամիս:
2. Շահ ռաբի ալլ, šah rabī alawl, Rebīh el-awl, Գ. ամիս:
3. Ռամադան, ռամադան, ռամադան. Ramadan.
4. Շաւալ (շամաղ), šawwāl, Ժ. ամիս:
5. Աղկադ, յաղկադէ, փուղկաթա, Zu el-Kahde, ԺԱ. ամիս:

(Շարունակելի):

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

¹ Իշխանութեան տեւողութիւնն՝ 20 տարի (813—
833) է՝ նշանակուած:

² Իբրաքիմ, որդի Մահմէտի: 817 նոյ. 19ին—819
մայիս 28 ի Բաղդատ հակաթոռ իշխեաց հռչակուե-
ցաւ ընդդէմ Մայմունի (Müller I, 504/6): Ուստի ամս
Ժ պէտքէ կարդալ ամս Գ. եւ Համարել այլ ձեռքէ:

³ Հարուն փախանեցաւ 809, մարտ 24ին: Եթէ
հոս Հայոց թուականը ՄԿ (811) կը յիշուի, պէտքէ
իմանալ թէ ընդդէմ աւարտած է 809/10ին, թարգմա-
նութիւնը կատարուած է 811 թուականին, երբ Հա-
րունն որդին Մահմէտ իսախանայ էր երկու տարիէ ի
վեր: 809—813 եւ չար. յաւելուած է:

ԵԳԻՔԻ ՊԵՏԱՊՈԹԵԱՆ ԲՆԱԳՐԱՔՆՆԵԼԵՆ ՀՐԱՏԱՐԱՊՈԹԻՆԸ (Շարունակութիւն):

15. Բնագրի վերակազմութիւնը: Ձեռա-
գիրներու բազմութիւնը կը ներկայացնէ
բազմակերպ ընթերցողածներ, պիտանի եւ
անպէտ: Այս խառնուրդէն ընտրելը դուրս
կորդելու, նախնական բնագիրն վերստանա-
լու համար, ոչ այնչափ ձեռագրաց հնու-
թիւնը, որչափ որակութիւնն է խնդրելի:
Ինչ կը թուի թէ Ա.—Ե ձեռագիրներէն Դ օրի-
նակը աւելի հարազատ կ'ընծայէ բնագիրը
քան Բ, Ա, Գ, Ե: Բախտով Դ խումբի ձե-
ռագիրներէն մին (Ծ⁹) բնագիրն եղած է
Եղիշէի առաջին տպագրութեան (Տ¹): Լաւ
պիտի ըլլար, եթէ նաեւ քննական հրատարա-
կութեանն բնագիրը առնուած ըլլար Դ ձեռա-
գիրը եւ անոր պակասները լրացուած նոյն
խումբի օրինակներով եւ ապա համեմա-
տուէր Ա.—Զ ձեռագիրներու եւ տպագրութե-
րու հետ:

Ես այս տեղ նկատի պիտի առնեմ մէկ
քանի տեղիքներ միայն, իբրեւ նմոյշներ,
ցոյց տալու թէ Եղիշէի բնագիրը կը կա-
րօտի տակաւին վերակազմութեան:

1. Էջ 3, տ. 1—3. Բն. Զբանն վասն
որոյ պատուիրեցեր՝ արարի, ո՛վ քաջ. վասն
Հայոց պատերազմին հրամայեցեր. յորում
բազումք առաքինացան քան զսակաւս:

Սկզբնաւորութիւնն Գործք Առաքելոցի
սկիզբը կը յիշեցնէ. «Զբանն առաջին գոր ա-
րարի վասն ամենայնի, ո՛ր թէոփիլէ. զոր՝
սկսաւ Յիսուս առնել... (Գործք Ա. 1): Դ
չունի «վասն որոյ», բայց ունի «զոր պ. ...
քաջ. որ վասն Հ. պ. 4.»:

Քան զսակաւս. Դ ունի «քան թէ սա-
կաւք» որ ուղղւոյն է: Ուստի պէտք է վերա-
կազմել.

Զբանն, զոր պատուիրեցեր, արարի
ո՛վ քաջ. [որ վասն Հայոց պատերազմին
հրամայեցեր, յորում բազումք առաքինացան
քան թէ սակաւք]:

Փակագծի մէջ առնուածը կարող է յա-
ւելուած ըլլալ Եղիշէի սկզբնագիրն խարդա-
խողէն: Կասկածելի է նաեւ «քաջ». ձեռա-
գիրք հայցողն Գաւիթ երէց Մամիկոնեան
կը ներկայացնեն, ուստի այստեղ պէտք է են-

թաղերէնք «ով քաջը (կամ մեծը) Գաւիթ»
(հմմտ. ո՛ր թէոփիլէ):

2. Էջ 3, տ. 4. «Յայսմ եւթն յեղանա-
կիս». պէտք է ուղղել «յայսմ եւթն յեղա-
նակս». հմմտ. էջ 4, տ. 4. «յայսմ յեւթն
դուլիս»:

3. Էջ 3, տ. 13. Ղեկերեցին. Դ դեգե-
րեցին:

4. Էջ 4, տ. 18. «Հայեցեալ... Հայե-
ցեալ. երկրորդը Տ¹ հայելով:

5. Էջ 4, տ. 21. «ընդ հրամանի քում.
Դ ըստ:

6. Էջ 5, տ. 15. «բերկրիցի». Դ. բեր-
կրեցի:

7. Էջ 5, տ. 18. «յօժարիցեմք». Դ. յօ-
ժարիցիմք:

8. Էջ 7, տ. 2. «վասն այնորիկ». Դ
այսորիկ:

9. Էջ 7, տ. 2—3. «զդառնութիւն թիւ-
նաւոր կամ ո՛ւր բացատրեցից զբազմութիւն
նետից». Դ զքայնս դառնութեան եւ կամ ո՛ւր
բացատրեցից: Եղիշէ 12 անգամ կիրակած է
«զդառնութիւն» սեռական հոլովով իբրեւ
«զառն». ինչպէս հոս:

10. Էջ 7, տ. 4. Առ յոյժ յիմարութեան
(Տ¹ յիմարութեանն) իբրեւ զգազան կա-
տաղի (Դ չունի կատաղի) յարձակեցաւ ի
վերայ աշխարհին Յունաց (Դ աշխարհիս
Հայոց եւ Յունաց). եհար մինչ ի քաղաքն
(Դ մինչեւ ցֆ.) Մծբին. եւ բազում (Դ
գրագում) զաւառս Հոռոմոց աւերեաց (Դ
աւարեաց) ասպատակաւ... կուտեաց զաւար
եւ զգերի (Դ չունի կուտեաց — զգերի):
Այնու որ խորով «մինչեւ ցՄծբին» ասպա-
տակած է, կ'ենթադրէ նաեւ հայկական սահ-
մանները. «աւարեաց» կը պարունակէ իր մէջ
«կուտեաց զաւար եւ զգերի»:

11. Էջ 7, տ. 16. «Սկսաւ այլ եւս (Դ
այնուհետեւ) խորհուրդ յաւելուլ, որպէս
(Դ իբրեւ թէ) ոք զի ի հուր բորբոքեալ յա-
ւելու բազում նիւթս փայտից (Դ փայտի):
Քանզի ուստի սակաւ մի կասկածոտն էր»:
Դ «կասկած ունէր». զոր Եղիշէ յաջորդ
էջերու մէջ դեռ երիցս զործածած է. կը
յիշեմ. «Եթէ ունէին սակաւ ինչ կասկած»,
էջ 161:

12. Էջ 7, տ. 19—21. Էր զոր բանիւք
սպանաւեօք, էր զոր կապանօք եւ տանջա-
նօք, էր զոր չարաչար մահուամբ վախճա-
նէր = Դ. «Էր զոր բանիւք եւ էր զոր սպա-
նաւօք եւ էր զոր կապանօք տանջէր եւ (էր)
զոր չ. մ. վ.»:

13. Էջ 8, տ. 1. Իբրեւ ետես եթէ վայ-
րատեալ ցրուեցան ի բազում կողմանս (Տար-
բերակը ԱԲՄ վայրավատեալ ցրուին. Կ վա-
րավատեալ, Դ վարատեալ Տ² վայրավատ-
եալ): էջ 46, տ. 14. Տեսանեմ զձեզ զխա-
չինս ցրուեալս եւ վայրատեալս յանապատի
(Տարբերակը, Բ վարանեալս, ԳԿ վայրավա-
տեալ. Ե Տ¹ վարատեալս):

Համեմատէ վկայք Արեւելից, էջ 34, տ.
4—5, Սոփերք Հայկ. ի 84) «զի զմարմինս
(մարմինք) սրբոց ի վերայ լերանց եւ ընդ
երեսս դաշտաց մերկ (մեծ) անարգանօք վա-
րավատեալ ցրուէին» (Տարբերակը Տ վայ-
րավատեալ. Ա վարատեալ, Բ վարավա-
տին):

Այս տեղ ունինք բառերս. վայրավա-
տեալ, վայրատեալ, վարավատեալ, վարա-
տեալ, վարանեալ, վա(յ)րավատին. թէ
տեալ, վարանեալ, վա(յ)րավատին. թէ
Արեւելեան վկայից եւ թէ Եղիշէի մէջ ուղիղ
ընթերցողածն է վայրավատին ցրուէին.
հմմտ. «ցիր վայրավատին» (Սերբիանոս,
40). «ցրեցան վայրավատին» (Ոսկ. Ես.
356). «արկ զնոսս վայրավատին» (անդ,
385): Այսպէս նաեւ Եղիշէ էջ 8. Իսկ 46 եւ
վայրավատին:

14. Էջ 8, տ. 19. «գէշաբարշ». ուղիղ Դ
գիշաբարշ:

15. Էջ 9, տ. 11. «ոչ ելանեն ընդ քո
իշխանութիւնդ». ուղիղ՝ ըստ քո ի.:

16. Էջ 12, տ. 1. զմարգիկսն, Դ զմար-
դիկսն. կարդա՛ զմարգիկն: Այսպէս նաեւ
էջ 31, 34 առանձին = առանձինն, 111, 1,
119, 8 կողմ = կողմն:

17. Էջ 29, 13—20 կարդա՛ «Այլ վասն
օրինա՞ցս մերոց. (նոքա) ոչ աներեւոյթ
(ինչ) են եւ ոչ յանկեան ուրեք աշխարհիս
քարոզին, այլ համատարած ընդ ամենայն
երկիր, ընդ ծով եւ ընդ ցամաք (եւ ընդ
կղզիս), ոչ միայն յարեւմուտս, այլ եւ յա-
րեւելս, ի հիւսիս եւ ի հարաւ եւ ի միջոցս
իւր հոծեալ: Ոչ ի մարդ ապաստան է, եթէ
լի հոծեալ:

վերակացու առաժնային ընդ աշխարհ, այս ինքն ինքեան ունի զհաստատութիւն. ոչ առ այլովքն վեհ երեւի, այլ ի վերուստ յերկնից ունի զօրէնադրութիւնն. ոչ միջնորդաւ, զի մի է Աստուած եւ չիք ոք այլ բայց ի նմանէ»:

18. էջ 73, 7, 13. Եղիշիմ: Յունական Florianos անունը Ղազար փարպեցւոյ քով պահուած է «Փղորենտ». ասկէ մոտ զտաժնէ Եղիշի քով, ԱԳ Եղիարիոս, Բ Եփարի եւ Փղարիոս: Դ Եփարիս եւ Եփղարիս, Ե Եփարիոս Ա Փղորենտիոս:

19. էջ 88, 25. Որոյ եւ ձախող իրացն իսկ բուն հարեալ էր նորա: ԲԴ ունին աւելի քերականական ճշդութեամբ. «որոյ զձախողակի իրաց բուն հարեալ էր»:

20. էջ 124, տ. 25—26. «Համարեալ էին նոցա դարափոքն իբրեւ զյարկս բարձրաբերձ շինուածոց. եւ գետնանկողինքն իբրեւ զնկարեալ պատշգամս»: Տեղիքս յարասութիւն մըն է Արեւելեան վկայքէն, «Լաւ համարէին... զդարափոքս անձուկս եւ զնստուկս քան զբարձրաբերձ պատշգամս» (էջ 38):

Դարափոք փոխառութիւն է Արեւելեան վկայքէն. ունին զայն նաեւ Փաւստոս Գ. 14. Բարսեղ, Վեցօրեայք. 72 եւ այլք, Եղիշէ (Ա ճառընտիր Վենետիկի). դարափոքն. նախընտրելի է քան ԲԴ «դարափոքն»:

Գետնանկողինք. այսպէս ԱԳԵ. իսկ Բ գետնախեշտի անգղիքն (նաեւ 144, 20) եւ Դ Գետնախիշտ ա. (նաեւ 144, 20). Վենետիկի Ա. ճառընտիր՝ գետնախիշտ ա., այսպէս նաեւ Յովհ. Մանգուկունի, Դուրեան, Ուսումնասիրութիւնք եւ քննադատութիւնք, Երուսաղէմ, 1935, էջ 269): Այս ընթերցումն ունին նաեւ Դասականք. գետնախիշտի լինել (Ոսկ. Պաւլ. Բ. 512). Եւազր, 141. նաեւ Եղիշէ 194, 16 եւ 200, հմտ. նաեւ Զգոն 350 «Գետնախիշտայ անկողինք»: Գետնախիշտի լինել. Եղիշէ, էջ 200, 14 (ԱԶԻ ձեռագիրք) եւ Անկանոն գիրք հին Կտակարանաց, էջ 135:

Այս նոյնաձեւ բաղադրուած բառերս արմատ ունին իսլաւ. որ առանձին չէ գործածուած, բայց ընծայած է իսլաւակ, (Ոսկ. Պաւլ. Ա. 127. «Ի խոտեղէն իսլաւկին»),

Խշտի (Ոսկ. Մատթ. Գ. 58. «մոխրատարած իշտեալ»), աւելի յաճախ յոյն. իշտի (Երեմ. ԾԱ. 39. Յոր. 11. «Ի իշտիս»: Ոսկ. Պաւլ. Ա. 123 գետնատարած իշտիք Եղիշէ 144, 20 գետնատարած անկողին):

Այս ընթերցումներէն ուշագրաւ է գետնախիշտ անկողին. ոչ խոտեղի գետնախիշտի ա., նաեւ գետնախիշտայ ա. եւ գետնախիշտի լ.: Հետաքրքրական է նաեւ ձեռագրին երկիցս գործածած գետնախիշտ ընթերցումը:

Կը վերջացնեմ նկատողութիւններս յայտնելով միւսանկամ շնորհակալիքս վատակաւորին, Ե. Տէր — Մինասեանին եւ խմբագիր Լ. Ս. Մաչիկեանին, Եղիշէի այլ բաղադրական հրատարակութեան համար:

Հ. Ն. ԱՊՐԻԼ

ՂԱԶԱՐ—ՉԱՐԸԳ, Յուշամատեան Բարձր Հայքի Կարնապատում. Պէյրուք 1957. էջ 792:

Կարնոյ Հայրենակցական Միութեան նախաձեռնութեամբ «Երկար տարիներու փառք» մըն է (Երկու խօսք) որ այս հրատարակութեամբ իր գոհացումը կը գտնէ «Փափազը» լրիւ կատարելու համար պայմաններն ու պարագաները բնաւ թոյլատրելէին (Անդ) — լրիւ իրաւունք կու տան ազնիւ Հեղինակին: Հետեւաբար գոհ լալու է այսքանով ալ՝ գոնէ առ այժմ: Այս թէ ոչ՝ Բարձր Հայք — Կարնոյն ալ կրնար իրաւունք ունէր հաստատիր մեծագոյնընտան Հատորի մը կամ Հատորներու մէջ ամփոփել իր ամբողջական պատմութիւնը: Առ այլ հարկաւոր էին սակայն նախ՝ ներթափանցելով գիւրութիւններ, երկրորդ՝ ուսումնասիրութեան նուիրուած բազմաթիւ անձերու երկարատեւ աշխատանքներով ու տքնութիւններով ձեռք բերուած արդիւնքը: Պայմաններ, որոնցմէ զուրկ է, զժախտաբար Կարնոյ վերապրողներու փոքրիկ թիւը:

Գիրքը կը բացուի համառօտ տեսութեամբ Կարնոյ աշխարհագրական գիրքի սահմաններու եւ արտագրութեան (էջ 9—32): 1913—1914ին Կարնոյն եւ իր զիւղերը

նէին 39, 477 հայութիւն մը (էջ 33): Կը յաջորդէ հակիրճ ակնարկ մը Կարնոյ Պատմութեան (էջ 36—47), երկրաչարժներու (էջ 51—54), զաղթականութեանց (էջ 54—58), տեղագրութեան (էջ 58—92) եւ տնտեսական կեանքի (էջ 98—123) մասին: Հետաքրքրական է Կարնոյ տուներու նկարագրականը (էջ 93—97):

Հայկ Մանկասարեան ունի յօդուած մը՝ Կարնոյ վաճառականութիւնը 1890—1914 (էջ 123—127): Օգտուելով Հ. Յակոբ Մ. Վ. Բոսեանի «Բարձր Հայք»էն (Վիեննա 1925) տրուած է Յանկը Կարնոյ Առաջնորդներուն, որուն կը կցուի պատմութիւնը Կարնոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ շինութեան (էջ 128—160): Կարեւոր գլուխ մըն է «Կրթական գործը Կարնոյ մէջ» (էջ 161—264), ուր ընդարձակօրէն խօսուած է մասնաւորապէս 1882—1914ի շրջանի մասին: Այդ գլուխը կ'ամբողջացնեն «Հասարակական կեանքը» (էջ 270—299) եւ «Մշակութային կեանքը» (էջ 300—332), վերջինը՝ մեր կողմէ գրուած: Կաթողիկէ եւ Բողոքական համայններու վրայ թուցիկ ակնարկէ մը վերջ (էջ 333—338) հետաքրքրական գլուխ մը կը բացուի — «Կարնոցիներու նկարագիրն ու սովորութիւնները» (էջ 338—391), նկատի առնելով նաեւ տեղւոյն լեզուն ու բարբառը:

Գրքին Հեղինակը՝ Պր. Ղազար—Չարըզ յատուկ գլուխ մը նուիրած է ներթիւս — Քաղաքական եւ Յեղափոխական շարժումները Կարնոյ մէջ (էջ 392—503) — ուր մասնագիտական ուսումնասիրութեամբ կու տայ ճշգրիտ պատկերը Կարնոցիին քաղաքական եւ յեղափոխական կեանքին, որուն կը յարէ «Կարնոյ փառքերը» (էջ 504—585) եւ կենսագրականներ Կարնոցի աջաբուն եկեղեցական, քաղաքական եւ մշակութասէր անձերու (էջ 586—787): Գիրքը կը փակուի ձայնագրուած 7 «Կարնոցիական շուրջպարեր»ով (էջ 788—790):

Կը շնորհաւորենք յարգելի Հեղինակը՝ Կարնոյն եւ Կարնոցիին արժանաւորապէս ներկայացնելու համար իր տարած ջանքերուն եւ յանձն առած տաժանքին համար: Կարնոյ ապագայ սերունդները բարխտադիտութեամբ պիտի թերթեն սիրուն Հատորին էջերը:

Հ. Ն. ԱՊՐԻԼ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱՅ, Շապին Գարահիսար ու իր Հերոսամարտ. Նիւ Եորք 1957. էջ 459:

«Մեկանով ու արցունով գրուեցաւ ուշացած այս հատորը» կը սկսի Արամ Հայկազի «Երկու խօսք»ը: Անդրանիկներ, Թորամաններ, Շահրիկեաններ, Գաջիկ Օղանեաններ եւ Շապին Գարահիսարի զիւցաղնամարտը կերտող աննման մարտիկներ ծնող Շապին Գարահիսար ոչ եւս է: Ու անոր վերջին օրհասը պատմել կարենալու համար հարկ էր արցունքի մէջ թաթխել գրիչը...

Այս Հատորին գլխաւոր նպատակը եւ ամենակարեւոր բաժինը եղած է Շապին Գարահիսարի Հերոսամարտը (էջ 126—283), որ տուած է ակնատես եւ մարտակից Արամ Հայկազ հրաշալի պատմով մը, որ մէկ շունչով կը կարդացուի ու աղի արցունքով կը տառապեցնէ ընթերցողը: Այդ նկարագրականը կը շարունակուի յետոյ ուրիշ պատմութիւնով (էջ 284—314), որոնք կը ձգտին ամբողջական դադափար մը տալ 1915—1918ին Շապին Գարահիսարի եւ շրջապատին մէջ տեղի ունեցած ահաւոր ողբերգութեան մասին:

Գրքին կարեւոր մէկ բաժինն ալ «Կենսագրականներ»ը կը կազմեն (էջ 347—422), ուր տրուած են Շապին Գարահիսարի եւ ուրիշ տեղերէ հոն պաշտօնավարող 43 անձերու կենսագրականները:

Հատորին մէջ զանց չեն առնուած նաեւ պատմական, տեղագրական, կրթական եւ աղագրական համառօտ տեսութիւններ զանազան անձերէ (էջ 11—90):

Տարակոյս չկայ թէ Շապին Գարահիսարի ամբողջական Պատմութիւնը չէ այս Հատորը եւ որ պէտք է օր մը գրուիլ՝ սակայն ինչ որ Արամ Հայկազ այստեղ տուած է՝ աւելի չէր կրնար ուշանալ եւ ան իր այս տուածով շատ կարեւոր պակաս մը կը լեցնէ՝ անմահացնելով յիշատակը Հայաստանի մէկ բեկոր՝ Շապին Գարահիսարի՝ արի ու զիւցաղն Հայդուկներուն:

Հ. Ն. ԱՊՐԻԼ